

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-----2019 թվականի N----Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 364-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանն արտաբյուջետային միջոցների հաշիվ բացելու թույլտվություն տալու մասին» թիվ 364-Ա որոշման մեջ «ինը» բառը փոխարինել «տասներկու» բառով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 364-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանն արտաբյուջետային միջոցների հաշիվ բացելու թույլտվություն տալու մասին» N 364-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» դրամաշնորհային ծրագրի իրականացման պահանջներից:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի թիվ 364-Ա որոշմամբ կրթության և գիտության ոլորտի կարգավորման և կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, ռազմավարական ծրագրերի, կրթական բարեփոխումների և կրթության ոլորտում նոր սկզբունքների իրագործմանն աջակցող կազմակերպությունների կողմից ֆինանսական աջակցությունները մուտքագրելու և դրանք տնօրինելու նպատակով թույլատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարությանն այդ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից (15.04.2010-ից) ինը տարի գործողության ժամկետով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի ստորաբաժանումում բացել արտաբյուջետային միջոցների հաշիվ:

«Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) և ՀՀ կառավարության միջև 2010թ. օգոստոսի 6-ին կնքված AAG-111-G-10-002 օժանդակության համաձայնագրի ներքո իրականացվող «Սոցիալական ոլորտի բարեփոխումների» ծրագրի շրջանակներում: ԿԳ նախարարության և ԱՄՆ ՄԶԳ-ի միջև 2016 թվականի ապրիլի 8-ին ստորագրվել է համագործակցության փաստաթուղթ՝ «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» ծրագիրն իրականացնելու նպատակով: Ծրագրի իրականացումը նախատեսված էր 2016 թվականի ապրիլի 8-ից մինչև 2019 թվականի ապրիլի 8-ը: Ծրագրի նպատակն է ուղղակի օժանդակություն տրամադրել ԿԳ նախարարությանը՝ հզորացնելու ներառական կրթության համակարգը:

Ծրագրի ընդհանուր հաշվարկված արժեքը կազմում է 907,500 ԱՄՆ դոլար, որը նախատեսվում էր տրամադրել հետևյալ կերպ.

- ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ծախսերի փոխհատուցում՝ 825,000 ԱՄՆ դոլար,
- ԿԳ նախարարության ներդրում՝ 82,500 ԱՄՆ դոլար:

Ծրագիրն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 8-ի N 6 արձանագրային որոշմամբ հաստատված ժամանակացույցի:

Ծրագրի իրականացմամբ ակնկալվում է, որ տվյալ բարեփոխման արդյունքում կդադարեցվի երեխաների հոսքը հատուկ կրթական կենտրոնացված շուրջօրյա հաստատություններ, երեխաները կվերափնտեգրվեն ընտանեկան միջավայրում, և կձևավորվեն այլընտրանքային ընտանեկան և համայնքահեն կրթական ու սոցիալական ծառայություններ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ներառական կրթություն իրականացնող առնվազն 100 հանրակրթական դպրոցների վերանորոգում (ներառյալ թեքահարթակներ, հասանելի սանհանգույցներ, յուրաքանչյուր դպրոցում մեկ ռեսուրս սենյակի վերանորոգում և սարքավորումների տրամադրում), ինչպես նաև առնվազն 5 մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների վերանորոգում, կահույքի և սարքավորումների տրամադրում:

2019թ. մարտի դրությամբ իրականացավ են հետևյալ գործողությունները՝

1. Մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել են մի շարք ՀՀ կառավարության որոշման նախագծեր, մասնավորապես՝
 - կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի,
 - սահմանվել են մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները:
2. Հաստատվել են ծրագրի շրջանակներում տեղեկության կառավարման և տվյալների պահուստային կրկնօրինակման ու ամենամսյա հաշվանցի փաստաթղթավորման գործընթացները:
3. Իրականացվել և ամփոփվել է ՀՀ Սյունիքի մարզի հոգեբանամանկավարժական կենտրոնի և 11 հանրակրթական հաստատությունների նախագծանախահաշվային փաթեթների պատրաստման մրցույթը, որի համար նախատեսվել էր 10,265 ԱՄՆ դոլար: Ներկայումս աշխատանքներ են իրականացվում ս/թ հունիս-օգոստոս ամիսների ընթացքում հաստատությունների վերանորոգման կազմակերպման և սարքավորումների տրամադրման ուղղությամբ:

4. Իրականացվում են ՀՀ Լոռու մարզի մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի և թիրախային դպրոցների շինվերանորոգման աշխատանքների ծավալների գնահատման աշխատանքները՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման նպատակով:

5. ԱՄՆ ՄՁԳ աջակցությամբ նախատեսվում է երկու միջազգային փորձագետների մասնակցություն ներառական կրթության հայեցակարգի լրամշակման և ճանապարհային քարտեզի մշակման նպատակով:

Վերոնշյալ ծրագրով սահմանված թիրախային գործողությունները ավարտին հասցնելու նպատակով ԿԳ նախարարությունը դիմել է ԱՄՆ ՄՁԳ-ի ղեկավարությանը՝ դիտարկելու գործող համագործակցության փաստաթղթի ժամկետի երկարաձգման հնարավորությունը: Արդյունքում համագործակցության փաստաթղթում կատարվում է փոփոխություն և ծրագրով նախատեսված բոլոր գործողություններն ու նախաձեռնությունները նախատեսվում է ավարտել 2021 թվականի ապրիլի 8-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվի գործելու ժամկետը լրանում է 2019 թվականի ապրիլի 15-ին՝ ներկայացվող նախագծով առաջարկվում է այդ հաշվի գործելու ժամկետը երկարացնել երեք տարով (մինչև 15.04.2022-ը):

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

Գործող քաղաքականության փոփոխություն չի նախատեսվում: Իրականացվող քաղաքականությունն է՝ ներառական կրթության ոլորտում բարեփոխումների իրականացման շարունակականության ապահովումը:

Կարգավորման նպատակը և բնույթը.

Կառավարության որոշման նախագծի ընդունումը նպատակ է հետապնդում թույլատրելու ՀՀ կրթության և գիտության նախարարությանը սպասարկող արտաբյուջետային միջոցների հաշվի սպասարկման ժամկետը երկարացնելու համար:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակիցները:

Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում պայմաններ կստեղծվի «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» դրամաշնորհային ծրագրի իրականացման աշխատանքների բնականոն ընթացքը ապահովելու համար:

Այլ տեղեկություններ

Ձկան:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-
Ի N 364-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանն արտաբյուջետային միջոցների հաշիվ բացելու թույլտվություն տալու մասին» թիվ 364-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8- Ի N 364-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.

Ձի առաջացնում:

2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.

Համապատասխանում է:

3. Այլ տեղեկություններ.

Ձկան:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի թիվ 364-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ:

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ Ֆինանսների նախարարություն 2019 թվականի ապրիլի 8-ի թիվ 01/12-1/5469-2019	Ֆինանսների նախարարության իրավասությունների շրջանակներում առաջարկություններ և դիտողություններ չունենք:	Ընդունված է:	
ՀՀ արդարադատության նախարարություն 2019 թվականի ապրիլի 23-ի թիվ 01/8736-19	<p>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի թիվ 364-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրում անհրաժեշտ է նշել իրավական ակտի կրճատ անվանումը:</p> <p>Նախագծի վերնագրում անհրաժեշտ է «Ն» տառը փոխարինել «Ա» տառով:</p> <p>Նախագծի 2-րդ կետն անհրաժեշտ է հանել:</p>	<p>Ընդունված է:</p> <p>Ընդունված է:</p> <p>Ընդունված է:</p>	<p>Փոփոխությունը կատարված է:</p> <p>Փոփոխությունը կատարված է:</p> <p>Փոփոխությունը կատարված է:</p>